

ՏԵՍԱԿԷՏ

ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՉՈՑ՝ ԱՏՐԿԱՅՈՒՄԻ

Իրաքի վրայ ամերիկեյրիտանական դաշնակից զորքերու պատերազմին վայրկեանը վայրկեանին հետեւող հանրային կարծիքը, անկախ այդ պատերազմին օրինականութեան, յայտարարուած ու գաղտնի նպատակներուն, քաղաքական հետեւանքներուն, կրօնաստիճանին թէ պոհերուն անեւ ականատես է Իրաքի ժողովուրդին մարդասիրական օժանդակութիւններ հասցնելու «հեւքի» մը, եւ այդ գծով արեւմտեան քաղաքական ծառայութեանց կամատր Կինուորագրումին:

Այսպէս, թէ՛ ամերիկեան, թէ՛ բրիտանական բարձրաստիճան պաշտօնատարներ եւ անոնց շրջանային գործակատարներ կը ցուցաբերեն ծայրայեղ մտահոգութիւն իրաքի ժողովուրդին մարդասիրական օժանդակութիւն հասցնելու, որպէսզի կարելի դառնայ արժանապատիւ կեանք մը ապահովել պատերազմին ենթակայ ու պատերազմէն տուժող բազմա-հազար իրաքցիներու:

Իրաքի հարաւը, Ում Բաւրը նաւահանգիստը կը գրաւուի մարդասիրական օժանդակութիւն հասցնելու համար:

Պատրաշտի օղակայանը կը գրաւուի մարդասիրական օժանդակութիւն հասցնելու համար:

Չուրի եւ Ելեկտրականութեան կեդրոններ կը ոմբակոծուին մարդասիրական օժանդակութիւններու տեղ ապահովելու համար:

Իրաքի հիւսիսը ամերիկեան Կինուորական ներկայութիւն կը հաստատուի (Թուրքիոյ համաձայնութեամբ, այս անգամ... յանուն մարդասիրութեան), որպէսզի կարելի ըլլայ Իրաքի ժողովուրդին դեղորայք, ջուր եւ ուտեստներ հասցնելու:

Ամերիկեյրիտանական յարձակումին օժանդակող արաբական պետութիւններ իրենց սահմաններուն վրայ գաղթական-յաններ կը հաստատեն իրաքցի գաղթականներ ընդունելու համար:

Եւ վստահաբար, շարքը պիտի երկարի յառաջիկայ օրերուն, պատերազմի յաւելեալ սաստկացումով: Իսկ պետութիւններու մարդասիրական սկզբունքներն ու առաքինութիւնները նոր թոփոք պիտի ստանան:

Իր առօրեայ գործով պրաղող պարզ քաղաքացին, որ հեռատեսիլի պատատին առջեւ գամուած կը փորձէ վաղուան հաշուոյն դրական լուր մը փնտռել, արդարօրէն հարց կու տայ.

Ինչո՞ւ իրաքցի ժողովուրդը այսօր մարդասիրական օժանդակութեան կարիքը ունի:

Ինչո՞ւ պատերազմ հոչակել, հարուածել ու հարուածէն ետք օժանդակութեան հասնիլ:

Ինչո՞ւ ցարդ Իրաքի դէմ գործադրուող պատժամիջոցներու իբրեւ հետեւանք տարեկան 400,000 մանուկներու մահը առիթ չէր տուած մարդասիրական օժանդակութիւններու:

Ինչո՞ւ անհրաժեշտ է քանդել ամբարտակներն ու Ելեկտրականութեան կեդրոնները, մութի մէջ ծարաւ ձգել ժողովուրդը եւ ապա օժանդակութեան հասնիլ:

Արդե՞օք կարելի է իր պատկը կորսնցուցած մարդը միխթարել քանի մը տուփ «մարդասիրութեամբ»:

Արդե՞օք իր երկրին գերիշխանութիւնը բռնաբարուած իրաքցի քաղաքացին քիչ մը «մարդասիրութեամբ» պիտի ոտնակոխէ իր արժանապատուութիւնը:

Արդե՞օք անհրաժեշտ է քանդել ու ետքը կառուցել, վիրաւորել ու ետքը դարմանել, ծարաւ ձգել ու ետքը ջուր տալ, մթութիւն ստեղծել եւ ապա մոմ վառել, որպէսզի մարդասիրական օժանդակութիւն հայթայթուի:

Այս հարցումներուն շարքը երկար է, շատ երկար, այնպէս ինչպէս Իրաքի դէմ շղթայակոծուած պատերազմին տուել տուող պատժանքները հսկայաթիւ են, բայց շատ հեռու՝ յայտարարուած պատժանքներէն:

Պատերազմը տեղի կ'ունենայ անխնայ կերպով:

Նախընտրելի է մարդասիրական օժանդակութիւններու փոխարէն պատերազմը դադարեցնել:

Իսկ պատերազմի հետեւանքով մարդասիրական օժանդակութիւնները ստրկութիւն կը ստեղծեն եւ ոչ՝ արժանապատիւ կեանք:

Իսկ թէ ո՞վ կ'ուզէ ստրկացնել աշխարհը, պատասխանը յստակ է:

Թող այդ մէկը գէթ, մարդասիրական պատերազմներով չկատարուի:

Յ. ԲԱԿՐԱՏՈՒՆԻ

«ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԳՐՈՂՆԵՐ» ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԾԻՐԻՆ ՆԵՐՍԻ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ ՇՈՒՇԻԿ ՏԱՍԱՊԵՏԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երէկ, երեկոյեան ժամը 20:30ին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Հրաչ Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Լիբանանի Երջանային Վարչութեան գրական յանձնախումբի կազմակերպութեամբ «Լիբանանահայ գրողներ» դասախոսական շարքին առաջինը, նիւթ ունենալով լիբանանահայ բանաստեղծուհի Շուշիկ Տասնապետեանի գրականութիւնը:

Դասախոսական երեկոյին բացումը կատարեց Իրմա Գապարեան - Տէտէեան, որ խօսեցաւ «Լիբանանահայ գրողներ» դասախոսական շարքի կազմակերպման նպատակին մասին:

Այնուհետեւ, օրուան դասախոս Սադո Արեան վերլուծական ակնարկով մը խօսեցաւ Շուշիկ Տասնապետեանի գրական ստեղծագործութեան մասին, մէջբերումներ կատարելով գրողին բանաստեղծութիւններէն եւ խոհերէն:

Դասախոսութեան աւարտին, Շուշիկ Տասնապետեան ապրուով կարգաց իր ստեղծագործութիւններէն բանաստեղծութիւններ, գուգահեռաբար անոնց միտք բանին հաղորդելով ներկայ գրասէրներուն:

ԼԻԲԱՆԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉՉԱԿԱՆ 36ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի ներկայացուցչական 36րդ Շրջանային ժողովի Ա. նիստը տեղի ունեցաւ 21, 22 եւ 23 Մարտին, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ:

Ժողովին ընթացքին քննարկուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի 8րդ Ընդհանուր ժողովին յղուելիք մասնաճիւղերը եւ անհատներու առաջարկներն ու բանաձեւերը, որոնք կը վերաբերին Հ.Մ.Ը.Մ.Ի սկստական, մարզական, համաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներու, աշխատանքներու եւ ծրագիրներու:

Օրակարգի կէտերը սպառնէլէ ետք, ժողովը ընտրեց իր վեց պատգամաւորները, որոնք Լիբանանը պիտի ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.Ի 8րդ Ընդհանուր ժողովին:

ՆՆՈՒՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուրախութեամբ կը յայտնենք, որ այս Կիրակի, 30 Մարտ 2003ին, յատուկ հանդիսութեամբ պիտի նշուի Սրբոց Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ անկախութեան տօնը:

Երգեցողութիւնը պիտի կատարուի Եկեղեցւոյ «ՆԱՐԵԿԱՅԻ» երգախումբին կողմէ. Եկեղեցւոյ քառաձայն եղանակով, խմբավարութեամբ ՊՐՆ. ԳԵՈՐԳ ՊԵՊԵՏԵԱՆԻ: Պատարագի աւարտին տեղի պիտի ունենայ մատաղի օրհնութիւն:

Պիտի պատարագէ եւ քարոզ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ

(Բարեջան առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Առաջնորդ սրբազան հայրը պիտի ժամանէ առաւօտեան ժամը 9:15ին: Ան «Արաքս» փողոցի մուտքին պիտի արժանանայ ժողովրդային ընդունելութեան, ապա թափօրով պիտի առաջնորդուի Եկեղեցի:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին՝ դիմաւորելու առաջնորդ սրբազան հայրը, ներկայ ըլլալու Սրբոց եւ անմահ պատարագին եւ հաղորդուելու օրուան պատգամով:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ ՍՐԲՈՑ ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

PHOTO NERSES

(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳԻՄԱՆ 25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

36 photo ֆիլմի Գկարահանումը միայն 8,000 Լ. Ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍՍՅԵԸ ՆԱԵՒ

Լուսանկարի ցուցակը մը + ալպոմ մը + Գկարի INDEX մը

Կը Գկարները փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒՄՆ յատուկ յարգարարներով

PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Բաղաքապետարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»-ի դիմաց: ԵՆ. 01 - 261858 եւ 01 - 255992

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ՝ ՉԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կատարողութեամբ՝ ՀԱՅՐԵՆԻ ՎԱՍՏԱԿԱՌԻ ԳԵՐԱՍԱՆՈՒԿԻ ՎԱՐՉՈՒԿԻ ՎԱՐՉԵՐԵՍԵԱՆԻ

- Մենախոսութիւններ՝ հանրայայտ ներկայացուցիչներ եւ ֆիլմեր
- Ամսուր
- Երգիծական մանրապատումներ՝ բատերական կեանք

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 27 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ճեմարանի «Վասպուրական» սրահին մէջ. շոքաբ էլ Պլաթ:

السفير
النصار
الديار
المستقبل
الانوار

السفير
النصار
الديار
المستقبل
الانوار

Լիբանանեան օրաթերթերը իրենց երէկեան թիւին մէջ լուսարձակի տակ առած են իրաքեան պատերազմը եւ անոր իրադարձութիւններն ու ընթացքը: Օրաթերթերը նաեւ անդրադարձած են երկիրներու կեցումներուն, արձագանգներուն եւ այս առնչութեամբ եղած պարզացումներուն:

«Նահար» գրած է, թէ Պուշ մտահոգ է Պաղտատի մէջ ռուս մասնագէտներու հաւանական ներկայութեամբ եւ այս շարք կը տեսակցի Պլէրի հետ: Բախում՝ Պատրաշտի մէջ եւ պատրաստութիւններ՝ հիւսիսային ճակատ մուտք գործելու: Սատամ ըսաւ, թէ ինք համոզուած է յաղթանակով: Հարաւային Պաղտատի մէջ տեղի ունեցաւ ամերիկեան ուժերու եւ Իրաքի նախագահական պահակազույգի անդամներուն միջեւ առաջին բախումը:

Ըստ թերթին, ամերիկեան եւ եւրոպական սերտ գործակցութիւն՝ դէպի Իրաք թրքական ներխուժումը արգիլելու համար: Գահիրէի մէջ գումարած Արաբական Լիգայի ժողովը դատապարտեց Իրաքի դէմ ամերիկեան թշնամութիւնը եւ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին պահանջեց անոր անմիջական կասեցումը:

«Նահար»-ի համաձայն, Իրաքի մէջ հսկայական Յեղափոխութեան Գերագոյն Խորհուրդի նախագահ՝ Այսթոյլա Մոհամետ Պաքըր Հաքիմ ըսաւ. «Սատամի տապալումէն ետք, ամերիկացիները պիտի վտարենք Իրաքէն»:

«Սաֆիր» գրած է, թէ Հարաւի մէջ Ամերիկայի ստացած հարուածները կ'արագացնեն հիւսիսային ճակատի ստեղծումը, իսկ ամերիկեան եւ բրիտանական ուժերը վերատեսութեան կ'ենթարկեն իրենց ծրագիրները:

Ըստ թերթին, արաբ արտաքին գործոց նախարարները կը դատապարտեն Իրաքի դէմ պատերազմը, իսկ Քուէյթ վերապահութիւն կը յայտնէ: ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը կոչ կ'ուղղէ արտակարգ ժողովի մը:

«Լիուս» օրաթերթը լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ Պաղտատի եւ Մուսուլի վրայ օդային յարձակումները սաստկացան եւ «Ավաչի» ուղղաթիւն մը վար առնուեցաւ: Պլէր ընդունեց, որ Իրաքեան ուժերը

բուռն կերպով կը դիմադրեն եւ ամերիկեան ու բրիտանացի պատերազմարտի վրայ, իսկ Ֆրանսա չ'ուզեր վայն իշխանութեան վրայ պահել, գրած է «Մուսթաքալա» օրաթերթը:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Ուաշինկթըն կը պատրաստուի բանալու հիւսիսային ճակատը եւ կասկած կը յարուցանէ Սատամի արտասանած ճառին մասին, իսկ Պաղտատ երկու նոր գերիներ ցոյց կու տայ պատկերասփիւռէն: Ըստ թերթին, Պատրաշտի օդակայանը գրաւելու միտումով Իրաք կ'անցնի հաւայարձակողականի:

Թերթը նշած է, թէ արաբ արտաքին գործոց նախարարները պահանջեն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին շուտափոյթ ժողովը: Արաբ նախարարները դատապարտեցին պատերազմը եւ պահանջեցին դաշնակից ուժերու Իրաքէն անմիջական հեռացումը: Քուէյթ կը քաշուի արաբական միասնութենէն, իսկ Մաթար ծաղրի առարկայ կը դառնայ, նշած է թերթը:

«Քիֆահ Արապի» գրած է նաեւ, թէ Դամասկոս բողոքեց Ուաշինկթընի եւ Լոսանոսի մօտ, սուրիական փոխադրակառքի մը ոմբակոծման համար: Ըստ թերթին, Յորդանան կը շարունակէ գործադրել ամերիկեան պահանջները եւ կը ձեռնարկէ իրաքցի 4 կալանածիւններ:

«Պայրաք» գրած է, թէ դաշնակից ուժերը հասան Պաղտատի փէշերուն, սակայն աւապամարտիկ կ'ուրջանցնէ անոնց յառաջացումը: Պատրան կը դիմագրաւէ քիմիական պէնթրոլ յարձակումի մը պատճառով:

«Իրաք կը ցուցադրէ երկու օդաչու գերիներ, իսկ Ուաշինկթըն կը յառաջացնէ հիւսիսային ճակատը համա-

«ՎԱՍՍԵ ԶԱՅԵՆԻ ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- ժամը 8:00 - Եկեղ ԽՆՈՂԱՆԸ
- ժամը 8:45 - Աստղեր
- ժամը 11:00 - Ետաքրքիր Աշխարհ
- ժամը 12:00 - «Մաքուր պահենք հայերենը»
- Շահանդուխտ
- ժամը 3:00 - Արաբերէն յայտագիր հարցազոյց՝ հոգի. Փառէն վրդ. Վարդանանի հետ, ծոմապահութեան, մարդկային եւ հոգեւոր կարեւորութեան մասին
- ժամը 5:00 - Գուսան
- ժամը 7:30 - Եկեղ ԽՆՈՂԱՆԸ (Կրկն)
- ժամը 8:00 - Պատասխան եւ Շահէ

կարգող խմբակ մը: Սատամ գրաւ կը դնէ Պաղտատի ճակատամարտին վրայ, իսկ Ֆրանսա չ'ուզեր վայն իշխանութեան վրայ պահել, գրած է «Մուսթաքալա» օրաթերթը:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Ուաշինկթըն կը պատրաստուի բանալու հիւսիսային ճակատը եւ կասկած կը յարուցանէ Սատամի արտասանած ճառին մասին, իսկ Պաղտատ երկու նոր գերիներ ցոյց կու տայ պատկերասփիւռէն: Ըստ թերթին, Պատրաշտի օդակայանը գրաւելու միտումով Իրաք կ'անցնի հաւայարձակողականի:

Թերթը նշած է, թէ արաբ արտաքին գործոց նախարարները պահանջեն ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին շուտափոյթ ժողովը: Արաբ նախարարները դատապարտեցին պատերազմը եւ պահանջեցին դաշնակից ուժերու Իրաքէն անմիջական հեռացումը: Քուէյթ կը քաշուի արաբական միասնութենէն, իսկ Մաթար ծաղրի առարկայ կը դառնայ, նշած է թերթը:

«Քիֆահ Արապի» գրած է նաեւ, թէ Դամասկոս բողոքեց Ուաշինկթընի եւ Լոսանոսի մօտ, սուրիական փոխադրակառքի մը ոմբակոծման համար: Ըստ թերթին, Յորդանան կը շարունակէ գործադրել ամերիկեան պահանջները եւ կը ձեռնարկէ իրաքցի 4 կալանածիւններ:

«Պայրաք» գրած է, թէ դաշնակից ուժերը հասան Պաղտատի փէշերուն, սակայն աւապամարտիկ կ'ուրջանցնէ անոնց յառաջացումը: Պատրան կը դիմագրաւէ քիմիական պէնթրոլ յարձակումի մը պատճառով:

«ՎԱՍՍԵ ԶԱՅԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ

- ժամը 8:30 - Լիբանանեան մամուլի գլխավոր խորագիրներ՝ ԱՐԱԲԵՐԵՆ
- ժամը 9:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ
- ժամը 10:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ
- ժամը 11:30 - Լիբանանեան մամուլի գլխավոր խորագիրներ՝ ՀԱՅԵՐԵՆ
- ժամը 12:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԵՆ
- ժամը 13:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ/ամփոփ
- ժամը 4:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ԱՐԱԲԵՐԵՆ
- ժամը 6:30 - Լիբանանեան, հայաստանեան եւ միջազգային լուրեր՝ ՀԱՅԵՐԵՆ

ՎԵՐՋԱՊԵՍ

Որդի Պուշ, ըստ երեւոյթին, կը սիրէ համայն մարդկութիւնը պահել սպասումի եւ յարուածութեան մթնոլորտի մէջ: Առաջին անգամ աշխարհ եւ համայն մարդկութեան մէջ զտնտեսեցան իր ընտանեկան սխրագործութեան առիթով: Ամբողջ մէկ ամիս սպասեցինք քուէհամարի շանտնուած գործընթացի մը ելքին:

Պէն Լատէն ինք նախաձեռնարկ ըլլալով ցնցեց թէ՛ Ամերիկայի եւ թէ՛ աշխարհը, 11 Սեպտեմբերի արարքով: Այս ղէպը թեւեր տուաւ կրտսեր Պուշին, որ այս անգամ շատ արագ շարժելով տեղաւորուեցաւ ԱՖղանիստանի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ:

Կատարեց հաւաքական կնուէք մը, երբ ստեղծեց նոր անուն մը՝ «Չարիքի առանցք»: Ապա, ամիսներու վրայ երկարած ժողովներէ ու համագումարներէ ետք, ահաւասիկ սկսաւ իրաքը գրաւելու պատերազմը: «Չարիքի առանցք»-ին գլխաւոր, թէ պուշը, չեմ դիտեր, ենթակայ է յարձակումի:

Սպասումի հանգրվան մը վերջ գտաւ հիմա կը սկսի նոր հանգրվան մը: «Ե՛րբ պիտի սկսին» վերածուեցաւ «Երբ պիտի վերջանայ» կամ «որքան պիտի տեւէ» սպասումի մթնոլորտի:

Մինչեւ յարձակումին սկսիլ մարդկութիւնը կը «միտիթարուէր» այն հասարակացումներով, որ պատերազմը պիտի ըլլար «վիրաբուժական», «կայծակնային» եւ

«արագ»... կը կարծուէր, որ իսկապէս բոլոր տուեալները գոյութիւն ունենին, այս հարցը արագ ձեռնով լուծելու եւ «փրկելու» իրաքի ժողովուրդը: Սակայն, հագիւր զի Պուշ, արար աշխարհին «աւետեց», որ պատերազմը կրնայ երկարիլ եւ սպասուածէն աւելի դժուարիլ ըլլալ... Շնորհակալութիւն, այսքան անկեղծ ու լուրջ հաւատարմութիւնը համար... Մայրեր, կիներ եւ քոյրեր, կրնաք առատ առատ արցունք թափել, մի՛ շտապէք:

Ինչպէս որ արարական առածը կ'ըսէ՝ «այ խայէր լա քտամ»... Սա սկիզբն է երկանց: Առաջին արարին առաջին տեսիլը: Իրաքը կոչեցեալ թատերաբեմին վրայ, ո՛վ դիտէ, թէ քանի՞ քանի արարներ պիտի ներկայացուին... Իսկ Շէյքսպիրի ազգակիցներուն ներկայութիւնը բեմին վրայ կրնայ զրաւականը ըլլալ այն բանին, որ համայնութեան ոճով թատրոն մը պիտի ըլլայ «Իրաքի համար ազատութիւն» երկը... Հերոսն ալ, հակահերոսն ալ իրենց հետեւորդներով գետին կ'իջնան...

Գլխաւոր որսը, որուն ետեւէն ինկած ըլլալ կը թուի, դո՛նէ այդպէս կը յայտարարեն ամերիկացիք, բնականաբար նոյնինքն Սատտամ Հիւսէյնն է: Ժամանակին Ամերիկայի շփացած մանչը, որ երկար տան վայելած էր ամերիկեան պետութեան հովանին եւ գուրդուրանքը: Ներկայիս անցած պէտք է համարել շփացածութեան

այդ շրջանը... Կ'ըսուի, թէ Սատտամ յատկապէս հիասթափ եղած է Տաշըտ Ռամսֆիլտէն, որ ժամանակին «պայայտութիւն» ըրած եւ զինած էր զինք ընդդէմ իր ընկերակցին: Ե՛րբ եւ ինչպէս պիտի որսացուի Պաղտատի Ժապաւէնը ամերիկեան ըլլալով՝ բնականաբար շատ պիտի երկարի: Մինչ այդ պիտի ինչնայ, ո՛վ պիտի ճգմուի, չենք գիտեր: Յատկապէս, որ շատ մայրեր արցունք պիտի թափեն ո՛չ միայն իրաքի, այլ նաեւ անկիւս - սաքար աշխարհին մէջ, Աւստրալիայէն Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ... Մինչ այդ առաջին մեծ գոհոհ հանդիսացաւ, պատերազմի սկսելէն իսկ առաջ, նոյնինքն ՄԱԿը:

Աշխարհի պատմութեան մէջ իր տեսակին մէջ աննախընթաց այս կայծակ երկրորդութիւնը ապրեցաւ վաթսուներեք կեսնրէն ընթացքին իր վատագոյն օրերն ու պահերը... Իմանականին մէջ ամերիկեան ծնող ունեցած համախարհային կայծակ երկրորդութիւնը անցեալին շատ վատ օրեր ապրած է: Յատկապէս խորհրդային նախաձեռնութեամբ բաւական վարկաբեկում ճանչցած էր ան: Ո՛վ կրնար մոռնալ նոյնինքն իր ընկերակցի արարքը, երբ ՄԱԿի Ընդհանուր Ժողովին ընթացքին, վաթսուներեքներէն, իր կողմովը սեղանը կը հարուածէր առ ի բողոք: Միջանկեալ յայտնեց, որ իր այդ

ձիտն ԱԿԱՆ Շար.՝ էջ 8

Մշակութային

ԵՐԲ ԱՆԻՆ ՄՆՈՒՄ Է ՀԵՌՈՒՄ

Անի - Հոռոմոս ճանապարհին, վանքից ոչ հեռու բարձունքի վրայ պահպանուել է մի ինքնատիպ շինութիւն՝ գոյգ եռաշարի աշտարակաւոր կամար, որը գրականութեան մէջ կոչուել է տարբեր կերպ. յաղթականամար, գանգակատուն, մուտքի կամար, բայց նշանակութիւնը ճշգրտօրէն չի որոշուել:

1211 թուականին նկարիչ Մարգարէն Սահակ Անեցու պատուէրով քաղաքի Բեխենց վանքում պատկերազարդ «Հաղթատի Աւետարանի»՝ «Քրիստոսի մուտքը Երուսաղէմ» մանրանկարում, որպէս սուրբ քաղաքի մուտքի նախատիպ, օգտագործել է հենց անիական յիշեալ յուշարձանը: Յիրաւի, նրա աշտարակը եւ մանրանկարում պատկերուած աշտարակը յարկերի համաշափային համադրութեամբ, ընդհանուր յօրինուածքով, անդամ փոքր լուսամուտի ձեւով միանգամայն նման են, եւ ակնյայտ է, որ անցիկ արեւտագէտը որպէս Երուսաղէմի մուտք պատկերել է Անիի մուտքը: Անցիկ նկարիչը «Քրիստոսի մուտքը Երուսաղէմ» աւետարանական յայտնի թեմային հաղորդել է «Քրիստոսի մուտքը Անի» ենթատեքստը: Սա աստուածաշնչեան իրողութիւնների տեղայնացման՝ հայկականացման եզակի ղէպ է:

Անի սրբազան քաղաք համարելու մի յատկանշական օրինակ է պահպանուել «Պատմութիւն քաղաքի» յԱնուոյ՝ բնագրում: Անանուն հեղինակը, խօսելով վրաց թագաւորի Անի արշաւելու մասին, գրում է. «Թագաւորի վրաց... եկն... ի վերայ Անուոյ քաղաքաւորակ վարաքին, նաեւ աստուածարեւակ ասեմ եւ ոչ ամաչեմ»: Հայ մատենագիրներն ու գրիչները «աստուածարեւակ» են կոչում միայն խոշոր վանքերը, նշանաւոր սրբավայրերը, բայց ոչ երբեք օրեւէ քաղաք, բայց Երուսաղէմից: Եւ ահա յիշեալ բնագրի հեղինակը նոյնն է ասում Անիի մասին: Հնարաւոր է, որ «աստուածաշնչային» գուգահեռների ոլորտում պէտք է որոնել Անիի անուն մասին վարդան Արեւելցու յայտնած վկայութեան բանասիր՝ «...գրապարկ Անի. որ կոչի խնամք»: Խնամք նաեւ «պահպանութիւն» եւ «հնարաւորութիւն» է ասուածային նախախնամութեան կողմից, քանզի, ինչպէս Ս. Գրիքն է վկայում՝ «Որ յուսացեալ է ի Տէր, ընդ խնամով կեցցէ» (Առակաց, ԻԸ, 25): Կարող էր Անին կայ ունենալ «աստուածային խնամք» հասկացութեան հետ: Ինչպէս վերը տեսանք, քաղաքի թէ՛ աշխարհիկ, թէ՛ հոգեւոր պետերը ջանում էին գտնական ձեւերով այդ կայսր գոյի ու տեսանելի դարձնել՝ մաքի կերպ ընդգծելով քաղաքի՝ որպէս «հոգեւոր մայրաքաղաքի» դերը:

Հարկ է նշել, որ Անիի հետագայ տխուր ճակատագրի մեկնարկութիւնը հալ միջնադարեան մատենագրութեան մէջ նույնպէս սովորաբար կապուել է ասուածային նախախնամութեան հետ, եւ քաղաքի քաղաքի ակտուալութիւնը պատճառարանուել են որպէս քաղաքացիների կատարած մեղքերի դիմաց ստացուած աստուածային պատիժ: Նման մօտեցման վաղ շրջանի առաւել ցայտուն գաղափարակիր Արիստակէս Լաստիվերտցին է, որն Անիի սելճուքեան զաւթման ու անբնական մասին պատմելիս աւելի մեծ տեղ է յատկացնում բարոյախրատական դատողութիւններին, քան բուն ռազմական գործողութիւնների նկարագրութեանը: Ընդ որում, Լաստիվերտցին Անիի ճակատագրի գուգահեռները շարունակ որոնում է հենց Ս. Գրքում՝ սկսած Բաբելոնեան աշտարակաշինութիւնից մինչեւ Երեքովի կործանումն ու Երուսաղէմի անբնական: Պատմիչը յիշում է Երեմիա մարգարէի Ողբը եւ գրում, թէ այն, ինչ ժամանակին կատարուեց Երուսաղէմում, հիմա եղաւ նաեւ մեզ մօտ՝ Անիում:

Հիմնականում նոյնպիսի տեսակէտով են Անիի պատմութեան ողբերգական էջերին անդրադառնում նաեւ Սամուէլ Անեցին, Մատթէոս Ուռհայեցին եւ ուրիշները, իսկ այդ միտումի առաւելագոյն զարգացումը գտնում ենք Աբրահամ Կրետացու «Պատմութիւն Անի քաղաքին» վերագրուած գործում, որը բառիս բուն իմաստով, կրօնաբարոյախօսական երկ է:

Բայց արդեօք այստեղ հակասութիւն չկա: մի կողմից՝ Անիի սրբազան «աստուածապահ» քաղաք է, միւս կողմից՝ նրա բնակիչներն իրենց մեղսախորութեամբ շարժում են Աստուծոյ գայլոյթը: Պատասխանը տալիս են մեր նոյն մատենագիրները: Նրանք քաղ գիտէին, որ առաջին ու գլխաւոր սրբազան քաղաքը Երուսաղէմն է, բայց այն եւս չիստուսկեց Աստուծոյ պատիւ: Սամուէլ Անեցու դիպուկ դիտարկումը՝ «... տեսաւ Արարիչը մեր հպարտութիւնը եւ հակառակուելով կսկծացրեց մեզ, ինչպէս հնում Խարյէլին, քանզի եթէ անդրաշինիկ չիստուսկեց, ինչու պիտի կրտսերի խնայէր»:

Այնուամենայնիւ, որքան էլ մարդկային մեղքերը պարսպաւոր գործում սկզբունքային էին հայ հոգեւորական մատենագիրները, նրանք անտարբեր էին Անիի ճակատագրի նկատմամբ, ընդհակառակը, դառնօրէն ողբում էին՝ յիշելով նրա նախկին փառքը: Անիի գրաւումը սելճուքների, մոնղոլների ու այլոց կողմից, այլազգիներից կրած բազում տառապանքները, կործանիչ երկրաշարժները, անեցիների աշխարհասփիւռ արտագաղթը եւ վերապահ՝ այս ամէնի հետեւանքով երբեմնի չբնագ քաղաքի անմարդարնակ ու անբնակ դառնալը, այն հայ ժողովրդի պատմական յիշողութեան մէջ ամրագրեցին ո՛չ միայն որպէս պետականութեան ու անկախութեան խորհրդանշան, այլեւ պարտերցին մարտիրոսի, նահատակի լուսապսակով, եւ Անին, թէկուզ յաճախ ենթագիտակցօրէն, համարուեց հայոց ազգային գլխաւոր սրբութիւններից մէկը:

Անիի գաղթականութիւնն ու նրանց սերունդներն ուր էլ որ գնացին, իրենց հետ տարան գեղակերտ Անիի յուշը եւ ամէնուր իրենց ծննդավայրի ստեղծա-



Գործ ոգուն ու աւանդներին հաւատարիմ մնացին:

Իսկ Անիի ինքը շարունակեց հայրենասիրական ոգեւորութեան աղբիւր մնալ: 1722 թուականին տեղեկանալով Դաւիթ Բէկի գլխաւորած ապստամբութեան մասին, 285 լիթմահայ երիտասարդներ շտապում են Միւնիք՝ իրենց ազգականներին օգնութեան: Նրանք, որ այս մասին պատմող բնագրում կոչուում են «լիթմարեակ անեցի հայեր», Տրապիզոնից Միւնիք մեկնելու ճանապարհին, անստեղծով բոլոր դժուարութիւնները, նախ այցելում են Անիի աւերակներ՝ հայրենասիրական իրենց երզումն այդտեղ տալու եւ կենաց մահու մարտից առաջ, ասես, սրբազան քաղաքի օրհնութիւնն ստանալու համար: Բնութագրական է նաեւ, որ հայերին այնքան շատ յոյսեր ներշնչած 1877 - 78 թուականներին, ուսու - թուրքական պատերազմից յետոյ կոստանդնուպոլիսի Հայոց Ներսէս վարժապետեան խիզախ պատրիարքն իր պաշտօնական «Պատրիարք օսմանեան հայոց» կոչումից առաջ սկսել էր կրել «արքեպիսկոպոս Անուոյ» պատուանունը, իսկ գրանից զեւ մէկ դար առաջ ուսուական արքեպիսկոպոս Հայաստանի ազատագրութեան ծրագրի ներկայացրած Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը որպէս ինքիշխան Հայաստանի մայրաքաղաք առաջարկում էր Վաղարշապատը կամ Անին:

Յետոյ հերթը հասաւ բանաստեղծներին: Արովեանից դեռ շատ առաջ եւ յետոյ, մինչեւ Թումանեան ու Իսահակեան, մինչեւ Յովհաննէս Շիրազ, հայ գրիչը բանաստեղծական սամուսկոպիտ տողեր ընծայեց Անիին, որին յաճախ նոյնացրեցին շնչաւոր էակի հետ: Անի, դու չես լուկ հողեղեմ մի գանձ, Դու, ինքը ես ողիւն - մի ողջ ժողովուրդ, Ամէն ձեւ այստեղ ո՞ն է գերագանց, Ամէն ինչ այստեղ - իմաստ ու խորհրդ:

(Ա. Իսահակեան)
Այսօր էլ անհնար է գտնել ազգային ինքնագիտակցութեամբ ոեւէ հայի, որին չյուզի երբեմնի ծաղկուն, այժմ աւերակ Անիի ճակատագիրը: Յիրաւի, դարերի հոլովոյթում բազում սերունդների վատաբերակ, հարեւոր երեւոյթներով ու բիրաւոր աղօթքներով սրբագործուած մի հող է Անին, որի ձգողական ուժը կենսունակ է նաեւ այժմ: Իր պատմութեամբ ու ճակատագրով աճել ու հոգեւոր արժէք է ձեռք բերել, ուստի իրաւունք ունենք ասելու, որ հոգեւոր Անին շարունակում է ապրել յարատեւում է:

Աստուրուը շարժում է դէպի կրեան: Ախորեանցի հայաստանեան Անիի գիտելու «էքսկուրսիան» արարուեց: Բոլորը լուռ են, ինքնամոխի: Պարտադիր չէ, որ Անիի մասին մասածեն: Անի յաճախ բերւա մտածում են կորած սիրով մասին: Մի անբախտաբեր թախիծ է պատում բոլորին, երբ Անիի մնում է հեռում:

ԿԱՐԵՆ ՍԱԹԵՒՈՍԵԱՆ
(Շար. 2 եւ վերջ)

CASIO

The World Of Silence...It's CASIO's Solution!

Quality Durability Dependability

TK-T200
Electronic Cash Register

Hospitality Business Efficiency From A Rugged, Modern Design Complete With Full-Flat Keyboard And Table Tracking. Drop-In Paper Loading System For A Fast, Silent Thermal Printer.

TE-2000
Electronic Cash Register

Two-Line Operator Display, New Multi-Tray Drawer. The First 2-Sheet, Drop-In Paper Loading System For A Fast, Silent Thermal Printer - All In An Attractive, Space-Saving Design Ideal For Any Retail Business.

TE-100
Electronic Cash Register

A Sophisticated, Compact Design Featuring An Innovative Multi-Tray Drawer. Quick, And Easy Drop-In Paper Loading. With A Fast, Silent Thermal Printer.

Sole Distributors in Lebanon:
Electronic office supplies S.A.R.L.

CASIO COMPUTER CO., LTD.
Tokyo, Japan

Fanar-Phone: 01/897710 - 891785 - 895122 - New Jdeideh-Phone: 01/899903 - 883550
E.MAIL: eos@dm.net.lb - Fax : 01/897711 - P.O.Box : 165212 Ashrafieh - Lebanon

ՀԱՄԱԳՈՒՄԻՆԻ
«ՌՈՒՐԵՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ»
ՍԱՍՆԱԳԻՏԻՎ
ՀԱՄԱԳՈՒՄԻՆԻ
«Ռ. ԶԱՐԿԱՐԵԱՆԻ»

ՇԱՐԹՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Ա.- CINE CLUBի յանձնախումբը կազմակերպած է՝
«SHINE» ՖԻԼՄ
ՑՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Բեմադրիչ՝ **SCOTT HICKS**
Գլխաւոր դերասան՝ **GEOFFREY RUSH**
Չորեքշաբթի, 26 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 8:00ին:

Բ.- Մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ
ՍԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ՉԵՆԱՐԿ
Շաբաթ, 29 Մարտ 2003, Երեկոյեան ժամը 7:00ին:

ԾԱՆՕԹ.- ՉԵՆԱՐԿԿԵՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵԱՆ
«ԱԶԱՏԱՍԱՐՏ ԱՎՈՒՄԻ «ՉՈՒԽԱՏԱՆԵԱՆ»
ՍՐԱՇԻՆ ՍԷՋ
ՍՈՒՔԸ ԱԶԱՏ
ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Միջազգային Քաղաքական Կեանք

ԻՐԱՔ ՆԵՐԻՍՈՒԹԵԼՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ԳՐԳԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Իրաքի դեմ պատերազմ յայտարարելու ամերիկեան անդրդուելիությունը կը միտի իր լրումին հասցընելու աւելի քան տասը տարի առաջ պատրաստուած ռազմավարութիւն մը, որուն մէջ հետապնդուած քաղաքական եւ տնտեսական շահերը բոլորովին կ'անտեսեն այլոց շահերը: Ուաշինկթըն կը սպասէր այս ծրագրի գործադրութեան դրուելու առիթին: 2001ի Սեպտեմբեր 11ը անոր տուաւ առիթը:

Ուաշինկթընի զրգապատճառը ո՛չ միայն Իրաքի քարուղի պահեստներն են, որոնք միջազգային հանրային կարծիքին աչքին ամէնէն բացայայտ ռազմավարական շահերը կը կազմեն, այլ նաեւ քաղաքական եւ տնտեսական զրգապատճառներ կան, որոնք աւելի վտանգաւոր են, քան այն, ինչ որ կը պատկերացընեն պատերազմի դէմ եղող երկիրները:

Քաղաքական զրգապատճառները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն մէջ.

• Հնդարձակել ամերիկեան ներկայութիւնը Ասիոյ մէջ եւ այսպիսով շրջապատել Չինաստանը, որ վերջերս տնտեսական հսկայական աճ արձանագրած է եւ կրնայ Միացեալ Նահանգներուն հետ մրցիլ:


• Մօտէն կարենալ հետեւիլ Հնդկաստանի եւ Փարսիանի, որոնք վերջերս հիւլէական ուժերը ունեցող երկիրներ դարձան, ինչպէս նաեւ «աչքի տակ» պահել Իրանը, որ հիւլէական ուժը պատրաստելու ընթացքի մէջ է:

• Իրաքի մէջ ներկայութիւնը կ'ամրապնդէ Կեդրոնական Ասիոյ նախկին խորհրդային խառն երկիրներուն հետ Ամերիկայի կապը: Այսպիսով Կասպից ծովու քարիւղին նկատմամբ Միացեալ Նահանգներուն ունեցած ախորժակը կը յազենայ:

• Չզուշացնել Եւրոպական Միութիւնը, որ «չահեռու բախում» եւ նմանօրինակ կարգախօսներ արձակած է. այսպիսով կը հաստատուի նաեւ այն համոզումը, թէ ամերիկեան կեցուածքին նկատմամբ Եւրոպայի ընդդիմութիւնը պիտի չյաջողի խախտել Միացեալ Նահանգներուն գերակայութիւնը աշխարհի վրայ:

• Իրաքը բաժնել երեք «ընտելացած» պետութիւններու՝ սիւնի, շիա եւ քրտական, այսպիսով նոր սահմաններ գծելով Իրանի, Թուրքիոյ եւ Սուրիոյ հետ:

• Չզուշացնել արաբական երկիրներու ղեկավարները եւ արքեպիսկոպոստները, թէ կարենալ է խոնարհիլ Ամերիկայի քաղաքական, տնտեսական եւ կրօնական պահանջներուն դիմաց, ապա թէ ոչ կրնան նիւթարկուել Իրաքի ճակատագիրին:



• Սպառնալ իսլամ պետութիւններուն, որպէսզի հակակշիռի տակ առնեն կրօնական ծայրայեղական խմբաւորումները, որոնք դէմ են ամերիկեան ներկայութեան եւ ամերիկեան «մշակութային ներխուժում»ին:

Իսկ տնտեսական զրգապատճառները կարելի է ամփոփել հետեւեալ կերպով.

• Իրաքի քարուղի հակակշիռի տակ առնել կը նշանակէ քարուղի ամերիկեան ընկերութիւններ վերադարձնել Իրաք, որուն պահեստները կը հասնին 44 միլիոն տակաւի (Միլիոնական Արաբիայէն ետք աշխարհի մեծագոյն պահեստները):

• Իրաքեան քարուղի հակակշիռի տակ առնելով՝ ամերիկեան ընկերութիւններ հակակշիռի տակ կ'առնեն նաեւ միջազգային շուկաներու վրայ քարուղի սակարանը, ինչ որ, իր կարգին, իր ազդեցութիւնը կ'ունենայ Կասպեան քարուղիի վրայ: Այս վերջինը ռազմավարական պահեստ կը նկատուի Ուաշինկթընի համար եւ պէտք է պահպանուի սպառազ շահերու համար:

• Միացեալ Նահանգներ հակակշիռի տակ կ'առնեն նաեւ Չինաստանի տնտեսական աճը, տրուած ըլլալով, որ Չինաստանի օդային ուժերը արդէն 80 առ հարիւրը կու գայ Մոնցի:

Ամերիկայի ծրագրերը դործադրութեան առաջին հանգրուանը բոլորեց Քուէյթի ազատագրման պատերազմին ընթացքին՝ Հայր Պուշի վարչակարգի օրերուն: Նայն ծրագրերը վաւերացնելու համար պետականներու հովանաւորութիւնը Որդի Պուշի օրերուն:

Ուաշինկթըն կ'ուզէ աշխարհին հասկցնել, թէ ուժերու հաւասարակշռութեան քաղաքականութիւնը, որ հիմը պէտք է կազմէ միջազգային քաղաքականութեան, ոչ եւս է, եւ թէ ամերիկեան զինուորական գերակայութիւնը պէտք է շարունակուի:

Այս նոր սկզբունքը, որ Ամերիկա կը պարտադրէ աշխարհին, հիմը պիտի կազմէ նոր կարգերու հաստատման, որոնք չնորհիւ բացարձակ ուժ ունենալով՝ Միացեալ Նահանգներ անարգել պիտի հետապնդեն իրենց շահերը:

ՀԱՄԱՆ ԹԱՎԱՐՆԵՐ

«Արապ Նիուզ» կայք

AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՍՅԻՆ

ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

• Over Bed Table
 • All Kinds Of Oxygen
 We Also Provide
 • Laboratory service,
 • Physiotherapist
 • Nurses Aids
 • P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՅԱՄԱՐԱՐ՝ «ԱՐՈՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅՇԻՏ ԸՆԵՔ, Բ. ՅԱՐԿ
 Գեղ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...
 ... OR WHERE YOU NEED.**

ԻՐԱՔԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԽՄԲԱԴՈՐՈՒՄՆԵՐԸ

Իրաքի նախագահ Սադամ Հիւսէյնի ընդդիմադիրները Լոնտոնի մէջ հանդիպում մը ունեցան՝ քննելու, թէ ինչպիսի՞նք Իրաք մը պիտի փորձեն ստեղծել, եթէ Սադամ տապալի: Հանդիպումը, որուն մասնակցեցան Միացեալ Նահանգներուն կողմէ ճանչցուած վեց խմբաւորումներ, երեք անգամ յետաձգուած էր Սադամի կրքոտ, աքսորուած թշնամիներուն միջեւ վիճարանութիւններու պատճառով: Ստորեւ՝ կարգ մը իրաքեան ընդդիմադիր խմբաւորումներ:

ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՆԿՐԵՍ

Միացեալ Նահանգներու կողմէ Ֆինանսաւորուած Իրաքի Ազգային Քոնկրէսը Սադամի իշխանութեան ընդդիմացող իրաքեան խմբաւորումներուն վրայ հովանոցի դեր խաղցող կազմակերպութիւն մըն է: Ան հիմնուած է 1992ին՝ Իրաքէն աքսորուած 300 քաղաքագէտներու, պաշտօնատարներու եւ ստանձնողներու կողմէ: Կազմակերպութիւնը կ'ընդգրկէ աւելի քան 30 քաղաքական խմբակցութիւններ, որոնց շարքին՝ ժողովրդավարական, սպառազանքային, աշխարհիկներ, իսլամականներ եւ քրիստոնէր:

ՔԻՒՐՏԻՍԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1996ին Սադամ իր ուժերը ուղարկեց քրիստոնէրու իշխանութեան տակ գտնուող հիւսիսային մէջ, Իրաք՝ Իրաքի Ազգային Քոնկրէսին ստիպելով, որ շրջանին մէջ իր գրասենականները փակէ (կարգ մը աղբիւրներու համաձայն, Քոնկրէսը Միացեալ Նահանգներու օժանդակութեամբ յեղաշրջում մը կը պատրաստէր): Իրաքի մէջ գրեթէ ներկայութիւն չունեցող կազմակերպութեան բախոր դարձեալ ըստուցեալ, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Գոլդուար 2001ին իշխանութեան զաւլէ ետք խոստացաւ 97 միլիոն տոլար քարուղի կազմակերպութեան՝ Սադամի դէմ անոր գործողութիւնները ֆինանսաւորելու համար:

Իրաքի ազգային Քոնկրէսի ղեկավարն է զրամատան նախկին պաշտօնեայ, Լոնտոնի ընդդիմադիր ղեկավարներուն գորակցութիւնը չի վայելել: Սակայն կ'ըսուի, որ ան գորտուր բարեկամներուն փենթակոնին եւ Քոնկրէսին մէջ: Ընդդիմութեան մէջ Չալապիի քաղաքական հիմնական մրցակիցը, «Չորսերու խումբ»ն է, զաշխարհիկ իրաքեան ղեկավարներուն հետ զինուորական զորակցութիւններն են, Իրաքի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն խորհուրդն են Սադամի Պաշտօնակազմի կողմէ կողմնակցութիւններն են, Իրաքի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն խորհուրդն են Սադամի Պաշտօնակազմի կողմէ կողմնակցութիւններն են, Իրաքի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն խորհուրդն են Սադամի Պաշտօնակազմի կողմէ կողմնակցութիւններն են:

ՔԻՒՐՏԻՍԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Քիւրտիստանի ժողովրդավար կուսակցութիւնը, որ հիմնուած է 1946ին, Մուսթաֆա Պարզանիի կողմէ, Իրաքեան ամէնէն հին ընդդիմադիր խմբաւորումներն են: Իրաքի չորս միլիոն քրիստոնէրուն յաւելեալ ազատութիւն պահանջելով՝ կուսակցութիւնը տասնամեակներով Պաղատի դէմ պարբերաբար պայքարած է: Պարզանիի գաւազը՝ Մասուտ, որ այժմ 55 տարեկան է, իր հօր մահէն ետք, 1979ին ստանձնեց կուսակցութեան ղեկավարութիւնը: Տարուան սկիզբը կուսակցութիւնը ներկայացուց սահմանադրական նախագիծ մը՝ քրիստոնէրուն ինքնավարութիւն երաշխաւորող զաշխարհային Իրաքի մը համար: 1991ին Մոնցի պատերազմէն ի վեր կուսակցութիւնը մրցակից Քիւրտիստանի Հայրենասիրական Միութեան հետ ստանձնած էր հիւսիսային Իրաքի իշխանութիւնը: Սակայն այս երկու հաւաքականութիւններուն միջեւ տարաբնույթ արհեստագործութիւն մը ճամբայ բացիլ:

ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐԱՄԵՈՒՄ

Բրիտանիա ուսած ջլարան Այաթ Ալլաուի, որ 1970ական թուականներուն վերջերք լքած էր Իրաքի մէջ իշխող Պաշտօնակցութիւնը, 1990ին հիմնեց Իրաքի Ազգային Համախմբումը՝ Քուէյթի եւ Յիւսիսային Արաբիոյ միջազգային ղեկավարներուն միջակայքը մը ճամբայ բացիլ:

ՔԻՒՐՏԻՍԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Միութիւնը հիմնուած է Դամասկոսի մէջ, 1975ին, 1974 - 75ի քրտական յեղափոխութեան ժամանակէն ետք, ժամայ թաղապանի կողմէ: Միութիւնը կը յայտարարէ իրաքեան ժողովրդավար իրաքեան ներքին ինքնորոշման իրաւունքին համար: 69ամեայ Թալապանին լաւ յարաբերութիւններ ունի Իրանի եւ Միլոսաւեան Արաբիոյ հետ: Ան նաեւ յաճախ տեսակցութիւններ կ'ունենայ ամերիկացի եւ թուրք պաշտօնատարներու հետ: Քիւրտիստանի Հայրենասիրական Միութիւնը եւ Քիւրտիստանի ժողովրդավար կուսակցութիւնը հիւսիսային Իրաքի մէջ ենթադրաբար առնուազն 40 հազար գինուորներ ունին, որոնք պաշտպանուած են ամերիկեան - անգլիական թուրք արգիլեալ զօտիին շնորհիւ:

ԻՐԱՔԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Միութիւնը կը բաղկանայ նախկին պաշտօնատարներու զինուորական խումբերէ: Անոր ղեկավարն է գորավար Թաուֆիք Նասիրի, որ ընդդիմութեան մէջ ամէնէն աւելի յարգուած անձնաւորութիւններն են: Նասիրի ապստամբ միաւորներ զինուորած է Մոնցի պատերազմէն ետք հարուստ Իրաքի մէջ Սադամի դէմ տեղի ունեցած շիաներու յեղափոխութեան ընթացքին: Ան վերաւորուեցաւ եւ Միլոսաւեան Արաբիոյ միջակայքը կապեր ունի աքսորուած այլ պաշտօնատարներու հետ, ինչպէս՝ նախկին պաշտօնակազմի պետ գործակալ իսլամական հետախուզութեան նախկին պետ գորավար Ուսայիբ Մամուրի: «ՈՌՅԵՐԸ»

ԻՐԱՔԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհուրդին ղեկավարն է Իրանի հաստատուած Այաթոլա Մոհամադ Պաքիւր Ալի - Հաքիմի: Որոնք հանրապետական կողմէ կողմնակցութիւններն են, Իրաքի Իսլամական Յեղափոխութեան Գերագոյն խորհուրդն են Սադամի Պաշտօնակազմի կողմէ կողմնակցութիւններն են:

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԸՍՏ ՓԵՆԹԱԿՈՆԻ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտը անցեալ Ուրբաթ օր յայտարարեց Միացեալ Նահանգներու Իրաք ներխուժման 8 նպատակները, որոնց շարքին՝ Սադամ Հիւսէյնի տապալումը, հաւաքական ոչնչացման գերքերու վնասագրերու մը եւ ահաբեկիչներու ձերբակալումը:

«Դաշինքին զինուորական գործողութիւնները պիտի կեդրոնացան բազմաթիւ եւ մասնաշաղկապ նպատակներու վրայ», յայտնեց Ռամսֆելտը ֆենթապենի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին՝ պատերազմական գործողութիւններու նպատակները ամփոփելով հետեւեալ ութ կէտերուն մէջ.

- Վերջ դնել Սադամ Հիւսէյնի վարչակարգին՝ օգտագործելով հարուածային ուժի այնպիսի ծաւալ եւ տարողութիւն, որ իրաքցիներուն կ'ապագուցէ, քէ Սադամը եւ իր վարչակարգը չէ գործարարուած են:
- Ստուգել, մեկուսացնել եւ, վերջապէս, բանդել Իրաքի հաւաքական ոչնչացման գերքերը, անոնց արձակման սարքերը, արտադրութեան կարողականութիւնը եւ տեղաբաշխման ցանցերը:
- Փնտրել, յայտնաբերել եւ դուրս բերել Իրաքի մէջ ապստան գտած ահաբեկիչները:
- Հաւաքել հետախուզական տեղեկատուութիւններ, Իրաքի մէջ քէ դուրս, ահաբեկիչներու ցանցերու մասին:
- Հաւաքել հետախուզական տեղեկատուութիւններ՝ հաւաքական ոչնչացման գերքերու համաշխարհային ապօրինի ցանցին մասին:
- Կասեցնել Իրաքի դեմ պատճառիչողները եւ անմիջական ձեռով տրամադրել մարդասիրական օժանդակութիւն՝ ուստեստեղէն եւ դեղորայք տեղահանուած եւ օժանդակութեան կարօտ իրաքցիներուն:
- Երաշխաւորել անվտանգութիւնը Իրաքի քարուղի պաշարներուն, որոնք կը պատկանին իրաքցի ժողովուրդին, եւ որոնք անհրաժեշտ են այդ ժողովուրդին եւ երկրին բարգաւաճման համար՝ Իրաքի այսօրուան վարչակարգին կողմէ տանձաւարութիւնը անտեսուած են:
- Օժանդակել իրաքցի ժողովուրդին՝ ստեղծելու պայմաններ փոխանցման արագ շրջանի եւ ներկայացուցչական ինքնակառավարման վարչակարգի մը հաստատման համար, որ վտանգ չէ իր դրացիներուն եւ նախնախնորներին: Երկրի տարածքային ամբողջականութեան:

ԸԱՅ ՄԵԾ ԳԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ

ԱԶԱՊԱՀԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՄՔԵՐ՝ ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Աղապահները, իրերայնորդ կաթողիկոսներու շարքին նաեւ բազմաթիւ հոգեւորականներ տուին՝ միաժամանակ կարեւոր դերակատարութիւն ունենալով ազգային - հասարակական կեանքին մէջ, իսկ Ա. Աշխարհամարտէն եւ Կիլիկիոյ պարպումէն ետք ցրուեցան տարբեր երկիրներ:

ՎԵՐՁ ԱԶԱՊԱՀԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ

Աղապահներ վերջին կաթողիկոս Կիրակոս Բ-ի վախճանումէն ետք (1865 չորսամբեր), Ազգային Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն, յանձնախումբ մը կազմուեցաւ Պոլսոյ մէջ՝ Կիլիկիոյ եւ Աղթամարի կաթողիկոսներու ընտրութեանց վերաբերեալ ծրագիր - կանոնագիր մը պատրաստելու համար: Պատրիարքարանը միաժամանակ Սիսի Աթոռին տեղապահ նշանակեց Այնթապի առաջնորդ սսեցի Մկրտիչ Եպիսկոպոս Մէմէրճեանը:

Նոյն օրերուն Բերիոյ թեմի առաջնորդ Նիկողայոս Եպիսկոպոս Կիլիսեան, որ Կիրակոս Ա. կաթողիկոսին քեռորդին էր, իբրեւ Աղապահներ տան ժառանգորդ ներկայացուեցաւ Կիլիկիոյ գահին անոնց կողմէ, որոնք դէմ էին պատրիարքարանի միջամտութեան: Ան 11 Յունիս 1866ի Լուսաւորչի Գիւտ Նշխարաց տունին Շաքարթ երեկոյեան Սիսի մէջ գաղտագողի կաթողիկոս օծուեցաւ ձեռամբ Յարութիւն Եպիսկոպոս Աղապահների, Կիրակոս Գ. անուանով եւ Հայէկ վերադարձաւ:

Պատրիարքարանին միջամտութեամբ Նիկողայոս Եպիսկոպոս Պոլսոյ տարուեցաւ, ուրկէ աքսորուեցաւ Արմաշի վանքը, յետոյ վերադարձաւ Սիս եւ 1880ին վախճանեցաւ Ատանայի մէջ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Յարութիւն Եպիսկոպոս Միքայէլ Բ. կաթողիկոսին եղբորորդին էր, Տէր Յուսիկի ճիւղէն՝ տակաւին վարդապետ՝ Կիրակոս Բ. կաթողիկոսին կողմէ ղրկուած էր Պոլսի՝ ուսանելու եւ նոր գիտութեամբ վերադառնալու Սիս: Կաթողիկոսին վախճանումէն ետք ստանձնելով պատասխանատուութիւնը՝ 1866ին կաթողիկոս օծեց Նիկողայոս Եպիսկոպոսը:

Երբ Նիկողայոս Եպիսկոպոսին օծումը անվաւեր նկատուեցաւ եւ Պոլսի տարուեցաւ, Յարութիւն Եպիսկոպոս Կիպրոս աքսորի դատաւարուեցաւ, բայց երբ իբրեւ աքսորական Ատանա հասաւ, ինքզինք իսլամութիւնը ընդունած հուսկեց, իմին անունը առաւ եւ ամուսնացաւ եւ իբրեւ վարձատուութիւն՝ սուլթանէն մեծիտիչ կարգի շքանշան ստացաւ եւ ամսական քառասուն ոսկի թոշակի արժանացաւ:

Հակառակ ինքզինք իսլամ հուսկեցուն եւ Աղապահներ տան անունը աղարտելուն, ան հոգեպէս կապուած մնաց հայ եկեղեցւոյ, իսկ կինն ու զաւակները բացայայտօրէն եկեղեցի կ'երթային: Մահէն առաջ կտակեց, որ զաւակները հաւատարիմ մնան հայ եկեղեցւոյ, հաղորդուեցաւ Աւետիս քահանայ Աղապահներին եւ, փափաքին համաձայն, թաղուեցաւ Ազգա Պապայի մէջ, ուր ժամանակին թաղուած են հայ իշխանագուններ:

Անոր մանչ ու աղջիկ զաւակները հայերու հետ ամուսնացան եւ անոնցմէ ոմանք թուրքերէն հալածուելով՝ Զէյթուն ապաստանեցան:

ՄԱՏԹԵՍ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Մատթէոս Աղապահներ եղբայրն էր Կիրակոս Բ. կաթողիկոսին, ծնած՝ 1827ին, Սիս: Կաթողիկոս եղբոր կողմէ ան ղրկուեցաւ Պոլսի, ուր Նուպար Շահնագարեան վարժարանին մէջ ուսում ստանալէ ետք վերադարձաւ Սիս եւ նուիրուեցաւ ուսուցչութեան, եւ աւելի քան կիսադար մը ձեռնարկեց նոր սերունդի դաստիարակութեան: Իրնէջ արուեստագէտի ձիրքերով օժտուած, միաժամանակ եղած է գծագրիչ, գեղագրիչ եւ քանդակագործ:

1915ի գաղթականութեան օրերուն, շնորհիւ իր քեռորդին՝ Սիսի օսմանեան երեսփոխան Մատթէոս Նալպանտեանի միջնորդութեան՝ տարագրութենէն զերծ մնաց: Կիլիկիոյ պարպումէն ետք, 1921ին անցաւ Յունաստան, ուր մահացաւ 1927ին, հարիւր տարեկան հասակին:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Միքայէլ վարդապետ, զաւակը՝ Մատթէոս վարժապետին, ծնած է 1881ին, Սիս. նկարագիրով՝ հեզ, բարեհամբոյր ու համակերպի: Նախակրթութիւնը ծննդավայրին Ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք մտա: ժառանգաւորաց վարժարանի, դաստիարակ ունենալով Մեւրոպ վարդապետ Ամատունին: 1904ին կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ եւ 1908ին Միսիսի կաթողիկոսական փոխանորդ նշանակուեցաւ:

Կիլիկիոյ 1909ի ջարդի օրերուն Միքայէլ վարդապետ Միսիսի կատղած խուժանին ձեռ-

քը ինկաւ, որոնք վարդապետն իտլիանցիներէ ետք զայն սկսան կտոր կտոր անդամահատելու լեզուն կտրեցին, մօրուքը փետտեցին եւ երեսին մորթը քերթեցին, մինչ վարդապետը շարունակ կը խաչակնքէր. յետոյ աջ ձեռքը կտրեցին, նոյն ձեռով ոտքերն ալ եւ վերջը ձիւհան գետը նետեցին ու վրան քանի մը գնդակ պարպելով նահատակեցին:

ԱԶԱՊԱՀԵԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ՝ ՏԱՐԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒ

Հայ եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած Աղապահներ գերդաստանի բազմաթիւ հոգեւորականներէն յիշենք նաեւ հետեւեալները. Ստեփանոս Եպիսկոպոս Աղապահներ իր գերդաստանին պատմութիւնը գրած է, որ ձեռագիր վիճակի մէջ պահուած է մինչեւ Մեծ եղեռնը:

Մկրտիչ քահանայ զաւակը՝ Եղիազար վարդապետ, որոնք 1741 Սեպտեմբերին, Ս. Նաչի տօնին Կեսարիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ուխտագնացութիւն կատարած են, յիշատակութիւն ձգած են ըսելով. «Աստուած հաստատ պահէ՛ զկեսարացիք, զբաղում երախտիքն տեսաք Տէր Յիսուս ինքն հատուցէ զփոխարէն. ամէն»:

Սուքիաս քահանայ Աղապահներ, ծնած՝ 1730-1740ական տարիներուն, 72 տարի քահանայութիւն ըրաւ. անոր զաւակն էր Սարգիս վարդապետ, որ ի յիշատակ իր հօր Մաշտոց գրչագրեց եւ 1835ին գայն Կուսինայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ նուիրեց:

Գրիգորիս Եպիսկոպոս Աղապահներ, Տէր Մարկոսի սերունդէն, ժԹ. դարու կէսերուն հեղինակաւոր դէմք եղած է մայրամբէն ներս, սակայն Նիկողայոս Եպիսկոպոսի կաթողիկոսական օծման իր մասնակցութեան համար 1866ին հեռացուեցաւ վանքէն:

Օհան վարդապետ Աղապահներ, ծնած՝ 1827ին, Սիս, կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ Կիրակոս Բ. կաթողիկոսին, Գոգանօղլուներուն պահանջով: Մտային խանգարումի ենթակայ՝ խթանքի առարկայ դարձաւ եւ անկարողութեան դատապարտուեցաւ:

Կարապետ քահանայ Աղապահներ քահանայագործեց Սիսի մէջ, 1878-1880 տարիներուն. վախճանեցաւ 35 տարեկանին:

Գրիգոր քահանայ Աղապահներ քահանայագործեց Սիսի մէջ, ժԹ. դարուն սկիզբը եւ կէսերուն. իբրեւ գրաճանաչ հոգեւորական, ժամանակի անդրագէտ եւ կիսագրագէտ քահանաներուն մէջ ան որոշ հեղինակութիւն եղած է:

Աւետիս քահանայ Աղապահներ ծնած է 1835ին, Սիս եւ 1875ին քահանայ ձեռնադրուած իբրեւ հոգիւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ: Իր համեստ եւ ժողովրդանուէր բնաւորութեամբ ան սիրուած ու յարգուած էր բոլորէն: 1915ի ռուսագաղթի օրերուն ինք եւ սսեցի քառասուն ընտանիքներ զերծ մնացին տարագրութենէ: Նոյն տարուան Աստուածածին տօնին, եկեղեցական արարողութեան աւարտին յանկարծամահ եղաւ եւ քաղքը մնացած փոքրաթիւ հայութեան կողմէ թաղուեցաւ Ս. Աստուածածին դպրոցին յատակը:

ԻՍԿԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Աղապահներ կաթողիկոսներէն ետք, գերդաստանին ամէնէն ականաւոր հոգեւորականը դարձաւ Աւետիս քահանայ Աղապահների զաւակը՝ Նաչի արքեպիսկոպոս. ան ծնած է 1883ին, Սիս: Նախակրթութիւնը ծննդավայրին Ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք 1898ին վանք մտաւ եւ ժառանգաւորաց վարժարանին ղասընթացքը աւարտելէ ետք 1902ին սարկաւազ ձեռնադրուեցաւ, 1909ին՝ արեղայ ձեռամբ Կիրակոս Եպիսկոպոսին, 1910ին վարդապետ՝ ձեռամբ Սահակ Բ. կաթողիկոսին: 1910էն 1913 մատակարարի պաշտօն վարեց մայրամբէն ներս, իսկ 1914ին իբրեւ նուիրակ ղրկուեցաւ Եոզղատի թեմը, ուր այդ առիթով վիճակագրութիւն մը պատրաստեց շրջելով շրջանային ղրկուեց: Վերադարձաւ մայրամբէն եւ ստանձնեց Սահակ Բ. կաթողիկոսին գաւազանակիրի պաշտօնը:

Մեծ Եղեռնի տարագրութեան օրերուն, 1915ին, Սիսի հայութեան տարագրութենէն ետք (25 Յունիս), Սեպտեմբեր 13ի Նաչիբնաջի կիրակին, լաց ու կոծի տակ տարագրութեան ամբարն բռնեց նաեւ մայրամբէնի փոքրաթիւ միաբանութիւնը: Նաչի վարդապետ եւ միւս երեք միաբանները (Սահակ Բ. կաթողի-

կոս արդէն Հայէկ հասած էր), գրաստներու վրայ բեռնեցելով, Ս. Ալէքըր, նուիրական սրբութիւններն ու սպասները ճամբայ ելան եւ տաժանելի, 23 օր տեւող ճամբորդութենէն ու ճամբան երկու միաբաններու բաժանումէն ետք, Նաչի եւ Կիրակոս վարդապետները հասան Հայէկ, անվնաս հասցնելով նաեւ եկեղեցական սրբութիւնները. անոնք յետոյ Երուսաղէմ փոխադրուեցան:

Նաչի վարդապետ 1916ին ղրկուեցաւ Պէյրութ իբրեւ հոգեւոր տեսուչ, ուր մնաց մինչեւ 1922 եւ վերանորոգել տուաւ թուրք կառավարութեան կողմէ քանդուած Ս. Նշան եկեղեցին: 1922ին ծայրագոյն վարդապետ ձեռնադրուեցաւ, 1923ին Հայէկի կաթողիկոսական փոխանորդ նշանակուեցաւ, 1929ին՝ Դաժնասկոսի, եւ նոյն տարին Հայէկի մէջ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ձեռամբ Սահակ Բ. կաթողիկոսին: 1933ին Անտիոքի թեմի կաթողիկոսական փոխանորդ նշանակուեցաւ:

Անտիոքի նահանգի Թուրքիոյ կցումէն ետք (1938ին), իր հօտի վերջին բեկորներուն հետ 1939ի ամբար Նաչի սրբազան հեռացաւ հունիզ, եւ իր հետ առնելով եկեղեցական սպասներն ու զանգակները Անթիլիաս վերադարձաւ: 1943 Մարտին, Եղիչ արք. Կարոյեանի վախճանումէն ետք՝ կաթողիկոսական տեղապահ ընտրուեցաւ, իսկ 1945ին, ընտրեալ Գարեգին Ա. կաթողիկոսի ժամանումէն ետք՝ Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդ: Գարեգին Ա. կաթողիկոսի վախճանումէն ետք, 1952ին, Երկրորդ անգամ ըլլալով կաթողիկոսական տեղապահ ընտրուեցաւ, զոր վարել մինչեւ 1955 ձուկտեմբեր, երբ Նորէն Եպիսկոպոս Բարոյեան փոխարինեց զայն:

Չարէհ Ա. կաթողիկոսի ընտրութենէն ետք, 1956ին, ընդդիմադիր միաբաններուն հետ ան հեռացաւ Անթիլիասին, բայց յետոյ, վեհափառի վախճանումէն (1963) եւ Նորէն Ա. կաթողիկոսի գահակալութենէն ետք վերադարձաւ մայրավանք. երկարատեւ հիւանդութենէն ետք Ազունիէի Ազգային բուժարանը փոխադրուեցաւ, ուր վախճանեցաւ 17 Յունիս 1968ին եւ մայրամբէն միաբաններու դամբարանին մէջ թաղուեցաւ:

ՅԱՎՈՐ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Աղապահներ գերդաստանի մտաւորական սերունդի անուանի ներկայացուցիչներէն Յակոբ Աղապահներ ծնած է 1882ին, Սիս: Ծննդավայրին Ազգային վարժարանը աւարտելէն ետք 1897ին ղրկուեցաւ Արմաշի դպրեվանքը, ուր 1895 - 1896ի ջարդերէն ետք որբերու համար դասարան բացուած էր: Վեց տարուան ուսման շրջանը աւարտելէն ետք 1903ին վերադարձաւ Սիս եւ Ազգային վարժարանին մէջ ուսուցիչի պաշտօն ստանձնեց, զոր վարեց մինչեւ 1906: Նոյն տարին հրաւիրուեցաւ Թոմարգա, ուր իրեն յանձնուեցաւ Ս. Աստուածածին վանքի գիշերօթիկ դպրոցին տնօրէնութիւնը եւ ուսուցչապետութիւնը. պաշտօն մը, զոր վարեց երկու տարեշրջան, մինչեւ 1908: Այնուհետեւ պաշտօնի հրաւիրուեցաւ Վահկայի Ազգային վարժարանէն ներս, զոր վարեց մէկ տարեշրջան, մինչեւ 1909:

Նոյն տարին, 1909ի ուսումնական տարեշրջանը աւարտելէն ետք մեկնեցաւ Միացեալ Նահանգներ եւ Քիւնզլնտ քաղաքը հաստատուեցաւ, ուր աշխատանքի մտաւ Ելեկտրական բարդի պատրաստող ընկերութեան մը մէջ: Հետագային Քայիֆորնիա հաստատուեցաւ, ուր գործօն դերակատարութիւն ստանձնեց հայ ազգային հասարակական կեանքէն ներս եւ Սիսի ու Թոմարգայի (Թոմարգայիներուն հետ մտերմացած էր հոն պաշտօնավարութեան իր տարիներէն) հայրենակցական միութիւններու կազմակերպման ու գործունէութեան բոլորանուէր աջակցութիւն բերաւ:

ԿԻԼԻԿԻՈՅ ՊԱՐՊՈՒՄԵՆ ԵՏՔ, ԱԶԱՊԱՀԵԱՆՆԵՐԸ ՏԱՐԵՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵՋ

Առաջին Աշխարհամարտին, Կիլիկիոյ հայութեան հետ Աղապահները տարագրուեցան ղէպի արարական անպատներ, ուր անոնցմէլ շատեր զոհուեցան. պատերազմի կրեցքը նաեւ ստանձնեց, 1919ին անոնք վերադարձան իրենց բնակավայրերը: Անտոլուի մէջ ծայր առած քեմալական շարժումը 1920ի առաջին ամիսներուն սկսաւ սպառնալ Կիլիկիոյ հայութեան: Այդ օրերուն Սամուէլ Աղապահներ (ծնած 1894ին, Վահ-



Նաչի արք. Աղապահեան

ուժերը: Յետոյ ղերի ինկաւ թուրքերուն ձեռքը եւ 101 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, բայց փախաւ եւ միանալով Անատոլուի խորքերը հասած յունական բանակին, գործօն մասնակցութիւն բերաւ կռիւններուն, յոյն հրամանատարութեան բարձր գնահատանի արժանանալով: Ան յետոյ Լիբանան հաստատուեցաւ:

Կռիւները բոլոր ճակատներուն վրայ սաստկացած էին. Հաճըն պաշարուած, կենաց մահու գոտեմարտեր իր մէջը. Ֆրանսական ուժերու հեռացման պայմաններուն տակ (Մարտ Փետրուար 11ին արդէն պարպուած էր) Սիսի հայութիւնը 1 Յունիս 1920ի երեկոյեան իր հայրենի օրրանը ձգելով գաղթեց Ատանա. 1921ին անոնք Լիբանան փոխադրուեցան: Աղապահները, ինչպէս սսեցիները եւ այլ գաղթականներ Պէյրութի ծովեզերքը, Ատանա քէմիփին մէջ, տախակէլ ու թիթեղէ հիւղակներու մէջ տեղաւորուեցան: 30 Յունուար 1930ի դիշերը մեծ հրդեհ մը հրոյ ճարակ ըրաւ քէմիփը, որմէ ետք, 1931ին, Պէյրութի արուարձաններէն Պուրճ Համուտի մէջ հիւրը դրուեցաւ Նոր Սիս թաղամասին: Աղապահները Պէյրութի եւ Նոր Սիսի մէջ բնակութիւն հաստատեցին, ոմանք այ տարբեր երկիրներ գաղթեցին, այսպէս.

Պէյրութի մէջ բնակութիւն հաստատեցին Գարիբէլ, Պարզեւ եւ Աւետիս Աղապահներն էր՝ իրենց բնաւանքներով. Նոր Սիսի մէջ՝ Ասատուր, Նազարէթ, Գրիգոր, Աղեքսանդր եւ Գարիբէլ Աղապահներուն ընտանիքները:



Սատրեոս վարժապետ Աղապահեան իր ընտանիքին հետ

Ֆրանսա գաղթելով՝ Մարսէլի Սէն Լու Կրան Փէն արուարձանին մէջ բնակութիւն հաստատեց իսկէնտէր Աղապահներ՝ եօթը հոգիներ իր ընտանիքով: Յունաստանի Գոքի-նիա քաղաքին մէջ բնակութիւն հաստատեց Գրիգոր Աղապահներ՝ հինգ հոգիներ իր ընտանիքով: Իսկ Միացեալ Նահանգներու Քիւնզլնտ քաղաքին մէջ 1909ին բնակութիւն հաստատած էր Յակոբ Աղապահներ:

Պրազիլ գաղթելով՝ Սան Փաուլօ քաղաքին մէջ բնակութիւն հաստատեց Գարիբէլ Աղապահներ՝ վեց հոգիներ իր ընտանիքով: Ուրուգուէյի մայրաքաղաք Փոնթեվիտէյոյի մէջ բնակութիւն հաստատեց Եփրեմ Աղապահներ: Արժանութիւն, Պուլէնոս Արլոյ գաղթեցին Միսսուս եւ իր երեք եղբայրները, ինչպէս նաեւ Կիրակոս, Բիւզանդ եւ Կարապետ Աղապահները:

1946ին՝ Ասատուլ եւ 1947ին՝ Գրիգոր եւ Աղեքսանդր Աղապահները իրենց ընտանիքներով Հայաստան ներգաղթեցին: Միքայէլ Եպիսկոպոս Աղապահներ, ծնած՝ 1963ին, Գիւմրի, Ս. Էլմիսանի Հոգեւոր ձեմարանի ուսման շրջանը աւարտելէն ետք 1988ին կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ, իսկ 2001ին Եպիսկոպոս՝ ձեռամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին, իր կեանքը առաջնորդ Շիրակի թեմին:

ՎԵՐՋԱՊԵՍ

Շարունակում է 5րդ էջը

արարքը, ՄԱԿը վարկաբեկել է առևտրի, այն արդիւնքը ունեցաւ, որ ինքը, Նիքիթան վար առնուեցաւ իր աթոռէն...

Ինչ որ Ամերիկայի եւ ո՛չ միայն Ամերիկայի, այլ՝ բոլոր մեծերուն, գործին չի դար, կը դառնայ «ժամանակավորէս» եւ անպէտք: Ըստ երեւոյթին, «ապաշխարեալ» նախագահն ալ պիտի ըսէ, թէ արդէն իսկ չէ ըսած, «To Hell with this UNO»...

ՄԱԿ յաճախ մատնուած էր մեծ թէ փոքր երկիրներու կողմէ, դժուարութեանց: Անհրճանազանութեան դրսեւորումներ անպակաս եղած էին: Սակայն հիմա իր իսկ «Տօր» կողմէ, օր ցերեկով եւ բազմիցս ճաշակեց ապտակներ, աքացիներ եւ վարկաբեկում: Երբ հլու հնազանդ էր իր հօր, լաւ էր, իսկ երբ իր «Տօր» դէմ կենալու յանդգնութիւն ցուցաբերեց, ստացաւ բուռն ցարժարուածներ «վերածննդ» թէքստստի կամայախարհային տնօրէնէն... Իր քաղաքի անապատի փոշիին նստելէն ետք ի՞նչ պիտի ըլլայ ՄԱԿին կամ ի՞նչ պիտի մնայ անկէ, ո՞վ կրնայ ըսել...

ՄԱԿին հետ, ըստ երեւոյթին, դժուարի կրակներուն պիտի արժանանան շատ մը սկզբունքներ, օրէնքներ, որոնք մարդ ըսուածը մարդ կ'ընէին... Պուշ թէքստստեան ոճով ստանկոխ ընելու չի վարանիր մարդկային իրաւունքներ, միջազգային համաձայնութիւններ եւ այլ արժէքներ...

Ստատամին համար արցունք թափողներ կրնան ըլլալ: Զինուորներու համար ալ շատ արցունք պիտի թափուի: Բայց ո՞վ արցունք պիտի

թափէ ՄԱԿին, մարդկային ազնիւ օրէնքներուն եւ մարդկութեան համար... Մինչ այդ ռազմական հօգուտ մեքենան սկսած է քանդել դարաւոր եւ պատմական Պաղատաբեր Այս քաղաքը շատ նուաճողներ տեսած է: Հին դարերուն սելճուք Հու-

լաղուն մէկ միլիոն մարդ ջարդած էր հոն: Հիմա, ըստ երեւոյթին, կարգը եկած է Պաղատաբեր, որ կրկին անգամ ճաշակէ հուլաղեան կոտորածներ՝ հուրով, սուրով եւ մասամբ նորին...

21 Մարտ 2003

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագինները հետեւեալներն էին երէկ.	32,35 - 32,45 լ.ո.
Սուրիական թղթուկի իրաքեան տինար	4855,00 - 4865,00 լ.ո.
Քուէյթեան տինար	4950,00 - 4975,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2100,00 - 2110,00 լ.ո.
Պահլէյեան տինար	3975,00 - 4000,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,00 - 412,00 լ.ո.
Քաթարեան դիալ	412,00 - 414,00 լ.ո.
Սէուտական դիալ	401,00 - 403,00 լ.ո.
Օմանեան դիալ	3875,00 - 3900,00 լ.ո.
Եգիպտական կինէ	250,00 - 260,00 լ.ո.
Անգլիական սթերլին	2375,00 - 2385,00 լ.ո.
Չուիցիբիական ֆրանք	1093,00 - 1098,00 լ.ո.
Թրքական լիրա	86,00 - 86,50 լ.ո.
Կիպրական փաուստ	2750,00 - 2775,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12,50 - 12,75 լ.ո.
Ափրիկեան հապար ֆրանք	2,75 - 2,80 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1019,00 - 1024,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	895,00 - 900,00 լ.ո.
Եւրօ	1612,00 - 1622,00 լ.ո.

● ՈՍԿԻ	Անգլիական մէկ ոսկի	130,000 - 135,000 լ.ո.
	Իրանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 լ.ո.
	Օսմանեան մէկ ոսկի	107,000 - 112,000 լ.ո.
	Մէքսիքական փէսոս	617,000 - 637,000 լ.ո.
	Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	16,040,000 - 16,240,000 լ.ո.
	Մէկ օսոս ոսկի	332,50 - 333,00 S
	Մէկ օսոս արծաթ	4,39 - 4,41 S
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	Եւրօ	1.0685 - 1.0690
	Քանադական տոլար	1.4758 - 1.4768
	Չուիցիբիական ֆրանք	1.3763 - 1.3773
	Ճափոնական եէն	119.90 - 119.95
	Մէկ սթերլին	1.5758 - 1.5768
	Մէկ դոլար	556 դրամ
● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	Գինի Ա. 6շդում Գինի Բ. 6շդում	
	Ա. կարգ	5 4 4/8
	Բ. կարգ	-

ԼՈՒՆԱՅԱԹՈՒ ԱԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՀԱՅԿԱԳԵՆՆ ԿԱՄԱՍԱՐԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՄ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
Եւ իր ԾԻԱԾԱՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Մահուան հազարանգամ անհոգի վերաթելուորում մը գրական - իմացական աւանդին

Կը բանաստե՛ (Անգլերէն լեզուով)

ՓՐՈՑ. ՍԵՂԱ Պ. ՏԱՏՈՅԵԱՆ
(Դասախօս Պէյրուսի Ամերիկեան համալսարանի)

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 27 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան համալսարանի Մեխակեան սրահին մէջ:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5399

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|--|
| ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱՅԵԱՏ |
| 1. Խաչխաչազգի կարմիր ծաղիկ: | 1. Չաստուածուհի - Անառակ: |
| 2. Փոխադարձ դերանուն - Փորոտիք: | 2. Գլխատ՝ շանաճանճ - Կրիճակ: |
| 3. Յանցաթաղանթ - Նոյն տառերը: | 3. Կայծակը չէգոքացնող կազմած: |
| 4. Ութալար - Մահացու հիւանդութիւն մը: | 4. Կայոց - Կրմուղ: |
| 5. Կեռ - խտիղ: | 5. Ետք պատճառող բոյս - Սկառու: |
| 6. Խնդածաղիկ - Որովհետեւ: | 6. Իբր դեզ գործածուող բուսական հիւթ մը - Սեղանարկ: |
| 7. Կրկնուած բաղաձայններ - Լարաւոր նուագարան - Չայնակից դիրքեր: | 7. Յորենի թարմ հասկ - Այրուրենէն - Անծին աճ: |
| 8. Դուկան - Երբեք: | 8. Արական օտար անուն - Մագուժ - Էական բայ (հակ.): |
| 9. Լուսարձակ - Արական օտար անուն: | 9. Թթուածնատ - Յուցական ածական: |
| 10. Շաղկապ - Եօթներորդ արուեստ: | 10. Սե խունկ: |
| 11. Արևոտ միջուկով քաղցր պտուղ - Մեծահարուստ: | 11. Տոպրակ - Գլուխը կախ՝ կրծող կենդանի: |

ԹԻԻ 5398

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Օ	Շ	Ա	Ն	Ք	Ե	Ղ	Ա	Ն	
2	Ա	Ճ	Ի	Ի	Ս	Ա	Լ	Յ	Ո	
3	Ս	Ա	Ս	Պ	Գ	Ի	Ք	Ղ	Ո	
4	Ա	Ն	Ա	Ր	Ի	Կ	Ե	Ր	Ա	
5	Ն	Ձ	Ա	Ո	Պ	Ձ	Ի	Ա	Ն	
6	Ա	Մ	Յ	Ա	Ո	Գ	Տ	Ո		
7	Լ	Մ	Ո	Ր	Գ	Ի	Շ	Ա	Յ	
8	Ո	Ի	Ի	Մ	Ե	Կ				
9	Ի	Ղ	Ա	Ն	Կ	Ա	Ր	Ե	Ձ	
10	Մ	Ի	Կ	Ա	Ս	Ք	Ղ	Ո	Ր	
11	Ա	Ղ	Ա	Ն	Ա	Մ	Ի	Ր		

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՐ / ՅՈՒՅԱԿԱՆ ԳԼԽ / ԶԲՕՍԱՆԵՐ ԶՈՒԹԻՒՆ

«ՈՒՄ ԸԼ ՆՈՒՐ» ԿԱԶԳՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԹԱՏԵՐԱԽԱՂԸ «ՇԱՄՍ» ՓԱՌԱՏՕՐԻՆ



«Լիբանանեան «Ում էլ Նուր» կապուորման կայանը «Կը հիւրընկալէ» քմարմուտութենէ բուսական ներկայացումները, որոնք բժշկական եւ մասնագիտական հոգածութեամբ եւ եւրպական չափանիշներու համապատասխանող մեթոտներով կը հետեւին ամիսներու վրայ երկարող բուսական հանգրուաններու: Կապուորման կայանը իր հիւանդներուն առիթ կու տայ նաեւ պարզացնելու իրենց ճիշդը կապուորման կայանը կը ներկայացնէ ընտանեկան ստորեայն սովորական պատկերներ, ուր ընտանիքին հայրը ամբողջ օրը հեկապ մա կը պէտք ունի:

«Ում էլ Նուր» կապուորման կայանը կը ներկայացնէ ընտանեկան ստորեայն սովորական պատկերներ, ուր ընտանիքին հայրը ամբողջ օրը հեկապ մա կը պէտք ունի:

ԱՅՍՕՐ

Փառաոտն «Յեսրիվալ Շամս տէ Ժեռն», ժամը 20:30ին «Պէյրուս» բառարանին մէջ:
Իրաքեան մշակութային շաբաթ՝ ժապաւեններու ցուցադրութիւն՝ «Ալ Մաոխնա» բառարանին մէջ, ժամը 17:00ին սկսեալ:
Լուսանկարչական ցուցահանդէս՝ Փոլ Զոլեյպի «Էօն Քայու տան գլխ կոտաս», մինչեւ 29 Մարտ, «Էսփաս Էս. Տէ.» ցուցաբանին մէջ:
Երաժշտական եւ պարային քառորդ՝ Մանսուր Ռահիպի «Մուր ալ բուռեֆ», ժամը 20:30ին, «Քաղից տիւ Լիպան»-ի մէջ:



ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՈՒՄԱՆ

26 Մարտ 1953

ՀԱՅԵՐԸ ԻՏԱԼԻՈՅ ՄԷՋ

Հոսմի հայոց թիւն է շուրջ 50: Աստուծէ 15ը տարագիրներն են, տասնեակ մըն ալ երաժշտութեան եւ կարչութեան ուսանողներ Իրանէն եւ Ամերիկայէն:
Զգոն Մ. վարդապետ Յունուար 16-28 աշնայեան Հոսմ, ուր տեսակցած է Կարտիկալ Արաբեանեանի հետ եւ այցելած Լեւոնեան ու Ստեփան: Միջիբանհեան տունը եւ Արաբալի Ուլուհոնեանին: Յունուար 22ին պատարագած է Անգլիական եկեղեցիին մէջ եւ Ս. հայրապետի թիւն տուած 25 ազգայիններու: Վարդապետ տեսակցութեանը ունեցած է իշխանութեանց հետ, ի նկատար գաղթականներու:
Պարիի «Նոր Արաբա» աւանդին մէջ կ'ապրին 6-7 հայ ընտանիքներ, 35 հոգի: Զգոն վարդապետ այցելելով Գառնի աւանը, այցելած է հոն գտնուող հայերու տունները եւ «Նոր Արաբա» լատին մայրապետներուն, որոնք 150 հոգինոց մանկապարտէզ կը կը վարեն: Հայու մը տան մէջ պատարագած է եւ հայորդիութիւն տուած բոլոր ազգայիններուն, որոնք երկրորդ աշխարհամարտէն ի վեր գրկուած էին հոգեւոր միջիբանհեան:

Ճեռովայի մէջ կան 5 հայ ընտանիքներ: Ասոնք ալ երկար տարիներէ ի վեր գրկուած էին հոգեւոր միջիբանհեան:

ՕՐԵՆԻՈՅ

ՉՈՐԵՇՇԱԲԹԻ,
26 ՄԱՐՏ 2003

ՊԷՅՐՈՒԹ
ԱՆՁԵՐԵԱՆՈՏ

ՋԵՐՄԱՍՏՈՋԱՆ
ՅԵՐԵԿ 16°C

ԳԻՇԵՐ՝ 12°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝
70%

